ՀայՓոստ
Հայաստանի Փոստ

#քոմտրոդկամենուր

Ել. - ՀՓ 1456/1-2025
«19» Մայիսի 2025թ.

ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
թիվ «ՀՓ-ԳՀԱՇՁԲ-24/34»-1
(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության և 2-րդ մասի պահանջները, ինչպես նաև այն, որ «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ն խախտել է «Հայփոստ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2025 թվականի ապրիլի 16-ին կնքած թիվ «ՀՓ-ԳՀԱՇՁԲ-24/34»-1 ծածկագրով գնման պայմանագրով սահմանված կահույքի պատրաստման աշխատանքների կատարման պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրի միակողմանի լուծմանը:

ՈՐՈՇԵՑ

«Հայփոստ» ՓԲԸ-ի հետ 2025 թվականի ապրիլի 16-ին կնքած թիվ «ՀՓ-ԳՀԱՇՁԲ-24/34»-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) կողմ «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04724855, հասցե՝ ՀՀ, ք. Բաղրամյան/Վաղարշապատ/ Աբովյան փ. 10/1) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու և վերջինիս միակողմանի լուծելու հիմքով՝ գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, վերջինիս ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՇՈՒՇԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Կատ.՝ Տարոն Սանոսյան
Գնումների վարչության ղեկավար
Հեռ.՝ (055) 300022

«ՀայՓոստ» ՓԲԸ
ՀՀ, 0002, Երևան, Սարյան 22
+374 10 514 514
info@haypost.am
www.haypost.am

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը, հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ	04724855	ՀՀ, ք. Բաղրամյան/Վաղարշապատ/ Աբովյան փ. 10/1		Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը, հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը		19.05.2025թ. «ՀՓ-ԳՀԱՇՁԲ-24/34»-1